# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լենտեքս ՍՊԸ-ն ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/31 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Լենտեքս ՍՊԸ | Լենտեքս ՍՊԸ | Կոշիկ կարճաճիտք | Լենտեքս ՍՊԸ | Կարճաճիտք կոշիկը /38-46 չափսերի/ բաղկացած է կոշկերեսի երեսամասից, հետնամասից, ճտքերից, լեզվակից, հիմնական ներդիրից, փափուկ եզրակից, ներբանից: Կաշին բնական նակատով, խոշոր եղջերավոր անասունի, սև գույնի, բարձր որակի, մշակված անջրանցիկ ծածկույթով (արգելվում է օգտագործել սպիլոկ կամ խոզի կաշի): Կոշկերեսի և հետնամասի կաշին պետք է լինի 1.8-2.0մմ հաստության, ճտքերը 1.4-1.6մմ հաստությամբ, իսկ լեզվակը՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 1.1-1.3մմ հաստությամբ արհեստական կաշվից: Կոշիկի վերնամասի բոլոր դետալների միացումներն իրականացվում են զույգ կարերով, իսկ առաջամասը ճիտքին միանում է եռաշերտ կարերով: Կոշիկի ներս հատվածում տեղադրված է սև գույնի ծակոտկեն գործվածք: Քթամասը և կրնկամասը կոշտ, առանց մետաղական կամ կոմպոզիտային ենթաքթամասի: Քթամասը ներսից մշակվում է 1.6 մմ հաստության թերմոպլաստ նյութով, իսկ կրնկամասը՝ ներսից մշակվում է 2.0 մմ հաստության թերմոպլաստ նյութով: Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձով կարակցված, առնվազն 2մմ հաստության բնական հումքից, պադոշից և կոշիկի համար նախատեսված 1.8մմ հաստության ստվարաթղթից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Լեզվակի հիմնական կաշվի և աստառի միջնամասը մշակվում է 1.5-2.5մմ հաստության սպունգանման նյութով: Ճտքերը վերնամասում մշակվում են փափուկ եզրակով, որը բաղկացած է ամուր, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մաշադիմացկուն, ցրտադիմացկուն արհեստական կաշվից և 0.8-1.2մմ հաստության սպունգանման նյութից: Լեզվակը փակ փական: Կոշիկի ճտքի բարձրությունն ետևամասի հատվածից պետք է կազմի 7.5 – 8.5 սմ: Ճտքերը վրա տեղադրված են 4 զույգ մետաղյա կեռիկներով օղագույցներով: Կապումն իրականացվում է 3.5-5 մմ տրամագծով և 150-160 սմ երկարությամբ քուղերով: Արտաքին ներբանը պատրաստված է մաշակայուն, ցրտադիմացկուն ռելիեֆային առաջին կարգի տերմոպլաստից` խիստ արտահայտված պահպանաշերտով: Արտաքին ներբանը կոշիկին միանում է սոսնձման եղանակով, բարձր ճնշման տակ: Արտաքին տեսքը` համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը ստվարթղթե արկղերով, արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսե մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Մատակարար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպությունը մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժան համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ` 5 օրինակից, որից հետո պատվիրատուն մատակարարին տրամադրում է կոշիկի քանակները ըստ չափսերի: Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը իր հաշվին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/31 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |